Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2021թ. մարտի 8-13-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա՝ 2021թ. մարտի 8-13-ը

4. Հրավիրող կողմը՝
Եվրասիական Տնտեսական Հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Եվրասիական Տնտեսական Միության արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրների զարգացման ծրագրի, Ռուսաստանի Դաշնության հետ երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնման հնարավորությունների և ուղղությունների քննարկում

6. Քննարկված թեմաները՝

- Պարենային անվտանգությանն առնչվող հարցերի և գյուղատնտեսության ոլորտում համագործակցությունն ընդլայնելու հնարավոր ծրագրերի քննարկում
- ՀՀ և ՌԴ ներքին շուկաներում առկա խոչընդոտների վերացմանն առնչվող հարցերի քննարկում
- ԵԱՏՄ արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրների զարգացման ծրագրերի քննարկում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Հանդիպում ՌԴ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սերգեյ Լևինի հետ: Օրակարգում ներառված էր երկկողմ համագործակցության հեռանկարային հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ Հայաստանի և Ռուսաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, ագրոարդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացմանը, սերմնաբուծության, ջերմոցաշինության, խաղողագործության ու գինեգործության ոլորտներին, հակակարկտային համակարգերին վերաբերող մի շարք հարցեր: Հանդիպման շրջանակներում արծարծվել է նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հողերի արդյունավետ օգտագործման հարցը: Ռուսաստանն այսօր բավական խիստ է մոտենում հողերի ոչ արդյունավետ օգտագործմանը և առաջիկայում նախատեսում է ավելի խստացնել իր մոտեցումները՝ նպաստելով հողերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Քանի որ հողերի արդյունավետ օգտագործումը նաև ՀՀ կառավարության առաջնային խնդիրների շարքում է, պայմանավորվածություն է ձեռք բերվել այս ոլորտում ուսումնասիրել ռուսական փորձը և, Հայաստանում հողային բարեփոխումներ իրականացնելիս, ակտիվորեն համագործակցել ռուս գործընկերների հետ:

- Հանդիպում ՌԴ Մոսկվայի մարզի ներդրումների, արդյունաբերության և գիտության փոխնախարար Անտոն Լոգինովի և ՌԴ Մոսկվայի մարզի արտաքին տնտեսական գործունեության աջակցության հիմնադրամի գործադիր տնօրեն Ալեքսեյ Պլետնևի հետ: Քննարկման առանցքում է եղել օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման և արտահանման աջակցման գործիքակազմը, անդրադարձ է կատարվել համատեղ նախագծերի իրականացման հնարավորություններին: Ռուսական կողմին ներկայացվել են Enterprise Armenia հիմնադրամի գործունեությունն ու ծրագրերը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հիմնական գործիքակազմը, ներդրողներին մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման գործընթացը, ինչպես նաև հայկական արտադրանքի արտահանման խթանմանը միտված աշխատանքները: Կողմերը միմյանց են ներկայացրել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերը: Առանձնակի հետաքրքրություն է առաջացրել պանրի կլաստերի ստեղծման ռուսական փորձը և պայմանավորվածություն է ձեռք բերվել ուսուցողական այցի շրջանակներում հայ գործընկերներին ներկայացնել նշված ոլորտում արձանագրված հաջողությունները:

- Հանդիպում «X 5 Retail Group» ընկերության (Ընկերություն) ներմուծման տնօրեն Արտյոմ Պերեյասլավցևի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են դեպի ռուսաստանյան շուկա հայկական սննդամթերքի արտահանումների ընդլայնման և հայկական արտադրանքի ներկայացվածության ավելացման հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2021 թվականի ապրիլ ամսին իրականացնել Ընկերության ներկայացուցիչների այց Հայաստան: 2021 թվականին Ընկերության ներկայացուցիչները պատրաստվում են 870 մլն ՌԴ ռուբլի արժողությամբ պտուղ-բանջարեղենի և 2.5 մլրդ ՌԴ ռուբլի արժողությամբ հայկական խմիչքի գնում իրականացնել: Վերջիններս հետաքրքրված են նաև հայկական տեքստիլ արտադրանքով: Հայկական կողմից ներկայացված կազմակերպություններից երկուսի հետ համաձայնություն է ձեռք բերվել և սկսվել է նախնական պայմանագրի կազմման գործընթաց: Հայկական կողմը կներկայացնի այլ կազմակերպություններ՝ համաձայն նախապես պայմանավորված ձևաչափի:

- Հանդիպում Ռուսաստանի արտահանման կենտրոնի հետ: Քննարկվել են փոխգործակցության հեռանկարները, ինչպես նաև արտահանումների արդյունավետ կազմակերպմանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ ռուսական կողմի հետ ձեռք է բերվել համաձայնություն հայկական բանկերին տրամադրել ցածր տոկոսադրույքով ֆինանսական ռեսուրսներ, որոնք էլ իրենց հերթին կտրամադրվեն համապատասխան կազմակերպություններին՝ խթանելով դեպի ՌԴ արտահանման ծավալների աճը: Enterprise Armenia հիմնադրամը և Ռուսաստանի արտահանման կենտրոնը, կարևորելով երկու կառույցների միջև գործարար կապերի ամրապնդումը և համագործակցության զարգացումը, կնքել են փոխըմբռման հուշագիր:

- Հանդիպում Ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական – հաղորդակցական տեխնոլոգիաների հարցերով ԵՏՀ Կոլեգիայի անդամ (նախարար) Գեղամ Վարդանյանի և ԵՏՀ ագրոարդյունաբերական քաղաքականության վարչության ղեկավար Արմեն Հարությունյանի հետ: Քննարկման կարևոր դրույթներից է եղել պարենային անվտանգության միասնական մոտեցումն ԵԱՏՄ անդամ երկրների միջև, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության զարգացմանն առնչվող ճանապարհային քարտեզի մշակումը ԵԱՏՄ անդամ երկրների կողմից և լոգիստիկ կենտրոնների ստեղծման հնարավորությունը՝ որպես Հայաստանում կայուն և կանխատեսելի մատակարարման գրավական, ինչը կխթանի արտահանման ծավալների աճը և կնպաստի փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:

- Հանդիպում ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տողանյանի և գործարարների հետ: Քննարկվել են հայ-ռուսական գործարար հարաբերությունների խորացմանն առնչվող մի շարք հարցեր: Առանձին անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության կողմից Հայաստանում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրերին:

- Այցելություն Մոսկվայի Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես: Քննարկվել են հայկական տաղավարի ներկայացավածության բարելավմանն առնչվող հարցեր, այդ թվում հայկական արտադրանքի ներկայացվածության մասշտաբների ընդլայնման հնարավորությունները ցուցահանդեսում և առկա հարթակի արդյունավետ օգտագործումը հայկական տնտեսավարողների և ՌԴ գործարար հատվածի համատեղ հանդիպումների համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի շրջանակներում ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և «Ռուսաստանի արտահանման կենտրոն» ԲԸ-ի միջև:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջիկայում անհրաժեշտ է կրկին այց կատարել ՌԴ՝ հավաքական լոգիստիկ պահեստ ստեղծելու, հայկական ապրանքների ներկայացվածությունն ընդլայնելու և ձեռք բերված պայմանավորվածությունները հետևողական շարունակելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

3/16/2021

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

16.03.2021թ.

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647